# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.08.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2017/07**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.05.2017թ. թիվ 03/73-3/9656-17 գրությամբ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

**1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի 24.05.2017թ. թիվ 03/16/1425-17 գրության հիման վրա, 31.05.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ ԷԵԲՆՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.05.2017թ. թիվ 278 գրությամբ դիմել է ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ հայտնելով, որ ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի և «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի միջև 14.04.2017թ. կնքվել է ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7-03 ծածկագրով ավտոպահեստամասերի գնման պայմանագիր, համաձայն որի Ընկերությունը պարտավորվել է ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Գնորդ) մատակարարել չորս անվանում ապրանք:

«Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն պատշաճ մատակարարել է երեք անվանում ապրանքը և 2017 թվականի մայիսի 4-ին Գնորդին տեղեկացրել է մեկ անվանում ապրանքը չմատակարարելու վերաբերյալ իր որոշումը, որով առաջարկել է կամ ավելացնել պայմանագրով նախատեսված ապրանքի միավորի գինը, կամ այդ ապրանքի մասով պայմանագիրը լուծել:

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամակացույցի վերաբերյալ, սակայն նշված նիստերին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2017թ. թիվ 03/73-3/9656-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայանալիք նիստի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2017/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2017թ. թիվ 03/73-3/9656-17 գրությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի 24.05.2017թ. թիվ 03/16/1425-17 գրությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի 17.05.2017թ. թիվ 278 գրությունը, «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7» ծածկագրով ընթացակարգի հրավերը, «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի և «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի միջև 14.04.2017թ. կնքված N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7-03 ծածկագրով գնման պայմանագիրը, Ընկերության կողմից 04.05.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությունը.

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7 ծածկագրով ավտոպահեստամասերի գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն՝ 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունը 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի և «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի միջև 14.04.2017թ. կնքվել է N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7-03 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 703.200 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (Հավելված N2) Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոպահեստամասեր (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N3):

Պայամանգրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. ապրիլ ամսվա ընթացքում մատակարարել թվով 4 անվանում ապրանք, այդ թվում՝ Անվադող JCB 18.4-R26 (թվով 4 հատ)՝ 432.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Սակայն Պայմանագրով նախատեսված ժամկետում Ընկերությունը պատշաճ մատակարարել է երեք անվանում ապրանքը:

Ընկերությունը 04.05.2017թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ իր կողմից հայտով ներկայացված գնի առաջարկում թույլ է տրվել վրիպում, որի արդյունքում 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար ներկայացված գները նշվել են մեկը մյուսի փոխարեն: Այսինքն, անվադող JCB 18.4-R26-ի համար որպես առաջարկվող ընդհանուր գին նշվել է 432.000 ՀՀ դրամ գումարը (4 հատի համար)՝ 1.056.000 ՀՀ դրամի գումարի փոխարեն: Ընկերությունը հայտնել է, որ նշված անվադողերը վերջինիս կողմից չմատակարարելը պայմանավորված է այդ հանգամանքով:

Ընկերությունը հայտնել է նաև, որ կարծում է, որ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված վրիպումը Պայմանագրի փոփոխման կամ լուծման հիմք է, քանի որ եթե նշված վրիպումը թույլ չտրվեր, ապա կողմերի միջև կկնքվեր էականորեն տարբերվող պայմանագիր, կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի այն հիմնավորմամբ, որ այդ չափաբաժնով Ընկերությունը չէր ճանաչվի հաղթող մասնակից:

Ընկերությունը հավելել է, որ տվյալ դեպքում պայմանագրի կատարումը կլինի ի վնաս «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի, քանի որ Ընկերությունը՝ մատակարարելով ապրանքը վրիպման արդյունքում նշված գնով, ակնհայտ վնաս կկրի 624.000 ՀՀ դրամի չափով և առաջարկել է փոփոխել կնքված պայմանագիրն ու պայմանագրով ապրանքի համար միավորի գին սահմանել 264.000 ՀՀ դրամը, իսկ Պայմանագիրը փոփոխելու վերաբերյալ

առաջարկը չընդունելու դեպքում՝ համապատասխան ապրանքի մասով պայմանագիրը միակողմանի լուծել:

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ն 12.05.2017թ. Ընկերությանն ուղղված թիվ 259 գրությամբ ներկայացրել է պայմանագրի լուծման վերաբերյալ իր դիրքորոշումը, որով հայտնել է, որ Ընկերության կողմից 04.05.2017թ. ներկայացված գրությունը դիտվում է որպես ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի և «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի միջև 14.04.2017թ. կնքված N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7-03 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու առաջարկ, քանի որ համարում է, որ պայմանագիրը կնքելուց հետո պայմանագրի գնի փոփոխությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությանը հակասող է և անընդունելի:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է, որ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-Ջ-7-03 ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

Միաժամանակ, Պատվիրատուն Ընկերությանն առաջարկել է վճարել Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը և պայմանագրի կատարման ապահովումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 60-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական է համարվում պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի անփոփոխ մնալու պայմաններում պայմանագրի գնի ավելացումը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն կնքել է ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի հետ ավտոպահեստամասերի գնման պայմանագիր, սակայն միակողմանի հրաժարվել է պայմանագիրը մասնակի կատարելուց, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով՝ խախտել է պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2017թ. «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**